

Իրավունք մշակույթ

Չկա հասարակություն
անուսնաց իրավունքի
Ubi societas ibi jus

Հ Ո Ր Ե Ք Չ Ա Ր Ք Ի
թիվ 16 (36)
2008 թ. օգոստոսի 20

Մինչ թերթը կտպագրվեր, հայտնի դարձավ, որ Ազգային ժողովի ընտրյալները մերժել են ստորև տպագրվող բաց նամակը Սևանի խնորհի վերաբերյալ: 80 պատգամավոր կողմ է քվեարկել լծից ջրառի կրկնապատկելու, նախագծին, և միայն 4 պատգամավոր է դեմ եղել: Ամօք...

ՄԵՐԺՎԱԾ ՄԻ ԲԱՅ ՆԱՄԱԿ

ՀՀ Ազգային ժողովի նախագահ պարոն Տ. Թորոսյանին
ՀՀ Ազգային ժողովի խմբակցություններին
ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներին

Պատճենը՝

ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ-ի մշտական ներկայացուցիչ տիկին Կ. Վիրալին
Հայաստանում եվրոպական համընթացողի պատվիրակության ղեկավար, դեսպան պարոն Ռ. դե Լուցենթերգերին
Հայաստանում եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակի տնօրեն տիկին Ս. Մարուխյանին
ԵԱԿԿ երևանյան գրասենյակի տնօրեն, դեսպան պարոն Ս. Կապինոսին

Հարգելի Աժ պատգամավորներ

Եվրոպական հասարակական դաշինքի և այլ հասարակական կազմակերպությունների ու մասնագետների անունից խոր մտահոգություն ենք հայտնում ՀՀ կառավարության այն նախաձեռնության կապակցությամբ, որի համաձայն նախատեսվում է Սևանա լճից ջրառը յուրաքանչյուր տարվա համար ավելացնել մինչև 360 մլն խոր. մետր և ՀՀ Ազգային ժողովի արտահերթ հիստուն համապատասխանաբար փոփոխություն կատարել «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերի հաստատելու մասին» ՀՀ օրենքում:

Սևանա լճից բացթողումների ծավալի վերին սահմանի կրկնապատկման հետ կապված մեր անհամաձայնությունը և անհանգստությունը պայմանավորված են նրանով, որ որոշումն ընդունվել է շատ հապճեպ, և դրա համար ներկայացված չէ էկոլոգատնտեսական մասնագիտական պատշաճ հիմնավորում: Մինչդեռ նման ծրագրի իրականացումը հղի է լճի էկոհամակարգի համար բացասական հետևանքներով, քանզի վերջինիս վերականգնմանն ուղղված նույնիսկ ոչ լիարժեք գործընթացների կատարումը կարող է հանգեցնել լճի էկոլոգիկացիայի ակտիվացման:

Ընդունելի չեն Սևանա լճից բացթողումների ծավալը փաստացի կրկնապատկելու վերաբերյալ մինչ օրս տրված բացատրությունները: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2008 թ. բնակիչայական պայմաններն այնքան արտակարգ չեն, ինչի կապակցությամբ կարող էր անհրաժեշտություն ծագել ջրառի նման հսկայածավալ աճի: Գյուղացիական տնտեսությունների կողմից ոռոգման ջրի պահանջարկի աճի վերաբերյալ պատճառաբանությունը պետք է ունենա համապատասխան հիմնավորումներ, ինչն առկա չէ: Իսկ ոռոգման ջրի համակարգի վաթսուր վիճակով կամ դրա կառավարման թերություններով պայմանավորված հիմնախնդիրները կպետք է լուծվեն Հայաստանի համար կարևորագույն ռազմավարական նշանակություն ունեցող քաղաքական ջրի պաշարի և ոռոգ էկոհամակարգի ամրապնդության հաշվին: Իրականում, առաջին տարին չէ, ինչ չարդյունավետ է Սևանա լճի մակարդակի հետագա բարձրացման արգելակման հարցը, որի բուն նպատակը, մեր կարծիքով,

լճի շուրջ անօրինական տնտեսական գործունեություն ծավալած մի քանի ձեռներեցների շահերի բավարարումն է:

Բացի վերը նշված խնդիրներից հարցականի տակ են Սևանա լճի էկոհամակարգի համար բացասական ազդեցության հանգեցնող տվյալ որոշման իրավական հիմքերը, քանզի որ այն հակասում է ՀՀ ջրային օրենսգրքի 5-րդ հոդվածով սահմանված՝ ջրային ռեսուրսների կառավարման, օգտագործման ու պահպանման, և «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով ամրագրված՝ Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման ու օգտագործման պետական քաղաքականության հիմնական սկզբունքներին:

Հայաստանի ռազմավարական ջրային պաշարի և տվյալ էկոհամակարգի վերականգնման ու օգտագործման միջոցառումների ծրագրում առաջարկվող նման լուրջ միջամտության հայեցակարգը ենթակա է բնապահպանական փորձաքննության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն: ՀՀ կառավարության՝ Սևանա լճից բացթողումներն ավելացնելու մասին որոշման ընդունման գործընթացը հակասում է նաև ՀՀ կողմից 1998 թ. ստորագրված և 2001 թ. վավերացված ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացում հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրիուսի) համաձայնագրի 4-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածների պահանջներին, քանզի որ շահագրգիռ հասարակայնությունը պատշաճ կերպով չի տեղեկացվել ու ներգրավվել որոշումների ընդունման գործընթացում:

Հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները՝ կոչ ենք անում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին ձեռնպահ մնալ Սևանա լճի և դրա էկոհամակարգի համար կործանարար հետևանքներով հղի այս միջոցառման մասին հապտապ որոշման ընդունման մասնակցելուց և կազմակերպել խորհրդարանական լուսններ Սևանա լճի, դրա վիճակի, կառավարման ու պահպանության հարցերի շուրջ:

2008 թ. օգոստոսի 13
Եվրոպական հասարակական
դաշինքի անունից, դաշինքի
համակարգող
Ս. ԱՐԱՄՅԱՆ

ԱՉԱԶՆԱԳ

1828-29 թթ.
ռուս-թուրքական
պատերազմի հե-
տևանքով Էրզրումի
նահանգի հայ
բնակչությանը
գաղթում էր Արևել-
յան Հայաստան...
Գաղթականների
բարավանք մոտե-
ցավ Սևանա լճին:
Ցամաքաբերդի մոտ
բարավանք մի



Ճյուղ անջատվեց՝ թեքվելով դեպի հյուսիս: Կորելով Բազումի լեռնաշղթան՝ բարավանքն իջավ դիմացի հովիտը և մոտեցավ Ձկնգետին: Երբ բարավանքն անցավ գետը, գաղթականները զարմանքով տեսան, որ սալլերի անիվների տակ սպանված ձկների արյունից գետի արձաթափալյն ամբողջով թափաք ներկվեց կարմիրով...
Բարավանք կանգ առավ: Սևանա ծովակն ու ձկնառատ գետն ավելի բան համոզիչ հանգամանք էին, որ դիմացի լանջին հիմնադրվել Ջիրուկուն՝ ներկայիս Մովսիսյանը:

Մի տարեց ծովագյուղացու պատմածից

ԽՍՄԲԱՐԻՔՅԱՆ ԿՈՒՍԻՑ. Ի՞նչ իմանալիս Շովպազուրի հիմնադիրները, որ մեկ դար անց երկրի ղեկը կհայտնվի այնպիսի մարդկաց ձեռքերում, ովքեր Հայաստանի խմելու ջրի այս «վերջին աղբյուրը» (տե՛ս՝ Զորի Բալայանի համապատասխան հոդվածը) ոչնչացնելու իրենավոր ծրագիր կնշանակն ու կիրականացնեն:

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում	էջ 2
Մարդու իրավունքների պաշտպանման ահապահումն է	էջ 2
Զեռքներդ հեռու՛ Սևանա լճից. «Սենք ենք տերը մեր երկրի»	էջ 3
Առօրյա կիրառելի օրենքներ	էջ 4
Հաջողվեց կանխել կանաչ տարածքի ոչնչացումը	էջ 4
Մոռացված ճակատագրեր. ոտնահարված իրավունք և արժանապատվություն	էջ 5
Արմեն Տեր-Քառյան. «Այվերդուրի թատերական կյանքն ու թատրոնի նվիրյալները»	էջ 6
Արմինե Դուկասյան. «Օրհներգի արժևորումը»	էջ 6
Սիրանուշ Պետրոսյան. «Աստվածամոր պատկերի պատմությունը»	էջ 7
Տեղեկություն, ազդ. հայտարարություններ	էջ 8



ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ ԱՅԱԶՆԱԳՈՒՄ Է

Հայաստանում վերջին շրջանում արձանագրվել են լրագրողներին ահաբեկելու և մասնագիտական պարտականությունների իրականացմանը խոչընդոտելու մի շարք դեպքեր, մասնավորապես՝ հուլիսի 29-ին՝ Տավուշի մարզի «Հայլուր»-ի թղթակից Գայանե Թամանյանի, օգոստոսի 1-ին «Հայկական ժամանակ» օրաթերթի տնտեսական գծով պատասխանատու Գագիկ Գրիգորյանի, օգոստոսի 11-ին՝ «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Լուսինե Բարսեղյանի նկատմամբ:



Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված լրագրողները

կարող են ներկայացնել իրենց հետ կատարվածի անբողջական նկարագրությունը՝ ընդհուպ մինչև իրենց խոչընդոտող անձանց ինքնությունը բացահայտող լուսանկարները և ահաբեկող անձանց մեքենաների համարները, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը կոչ է արել իրավապահ մարմիններին լինել հետևողական և հույս հայտնել, որ տվյալ պայմաններում բոլոր անհրաժեշտ միջոցների ձեռնարկման դեպքում առավել դյուրին կլինի բացահայտել օրենսդրվ իրականությունը և մեղավորներին օրենքով նախատեսված կարգով պատասխանատվության ենթարկել: Նշված միջադեպերը վստահում են բազմակարծությանը և խոսքի ազատությանը Հայաստանի Հանրապետությունում:

Օգոստոսի 18-ին երևանի կենտրոնում օժեռ է ենթարկվել նաև «Ազատություն» ռադիոկայանի երևանյան գրա-

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱՅՈՒՅՑ
Օգոստոսի 23 - Սպրկավաճառության վերացման և դրա զոհերի հիշատակի միջազգային օր

սենյակի ղեկավարի պաշտոնակատար Հրաչ Մելքոնյանը, ով հարձակումը բացատրում է իր մասնագիտական գործունեությամբ:

«Վերջին ամսվա ընթացքում հաճախակի են դարձել լրագրողների նկատմամբ բռնությունները, ինչի կապակցությամբ բազմիցս կոչ են արել իրավապահ մարմիններին առավել հետևողական լինել մեղավորներին բացահայտելու գործում, քանի որ նշված երևույթները սպառնում են երկրում խոսքի ազատության կայացմանը»,- նշված է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջում:

ՊԵՊՅՈՒՄ

Բելառուսում կանցկացվեց խորհրդարանական ընտրություններ



ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և Մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀԻԻԳ) սեպտեմբերի 28-ին Բելառուսում նախապատրաստվող խորհրդարանական ընտրությունների դիտորդման նպատակով ձևավորել է միջազգային 15 փորձագետներից կազմված ներկայացուցչություն հետևյալ Գիրո Հայրենի Միրենի գլխավորությամբ: Ընդ որում և 41 երկարամյակ դիտորդներ Բելառուսում աշխատանքներ կծավակեն օգոստոսի 19-ից:

Ներկայացուցչության գեղիմոնիին է հետևել արդյոք Բելառուսում ընտրություններն անցնում են ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան: Դիտորդները մանրամասնորեն կուսումնասիրեն քարոզարշավների ընթացքը, ընտրական համընթացությունների, կառավարական մարմինների և լրատվամիջոցների աշխատանքը: Եվս 300 կարճաժամկետ դիտորդներ ընտրություններից մեկ օր առաջ կժամանեն Բելառուս հետևելու ընտրական տեղաձուլների բացման, ընտրական գործընթացների, լրագրողների հաշվման և արդյունքների ամփոփման աշխատանքներին:

Չինական բախումներ՝ լուրջ հսկողություն



ՄԱԿ-ի ԱՆվանագրության խորհուրդը քննարկել է ԱՆվանագրության խորհրդի համեմատողի գեղիմոնիին 1540 բանաձևի կատարման վերաբերյալ: Բանաձևն անդամ երկրներին կոչ է անում խիստ վերահսկողություն սահմանել զանգվածային ոչնչացման գեղիմոնիին բոլոր համակարգերի նկատմամբ: Բանաձևը պահանջում է ընդունել արդյունավետ օրենքներ, որոնք կարգելեն ցանկացած ոչ պետական տարբերակի արտադրել, ձեռք բերել, տիրապետել կամ գործածել միջուկային, քիմիական կամ կենսաբանական գեղիմոնիին:

Հանձնաժողովի նախագահը Կոստա Ռիկայում ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչ Խորհի Ուրբիմոն, խորհրդի անդամներից հայտնել է, որ 37 երկրներ հաշվետու չեն եղել ահաբեկիչների վտանգավոր գեղիմոնիին բերելու դեմ միջոցների ձեռնարկումների վերաբերյալ: Դրանք հիմնականում աֆրիկյան երկրներ են: Ցուցաբերում որևէ ետևորիչային երկիր չկա:

ՔՐԻՄԻԱ

Մարդու իրավունքների օլիմպիական ռոտահարումներ

Մարդու իրավունքների դիտակը մշել է, որ Պեկինի օլիմպիական խաղերի 12 գլխավոր հովանավոր ընկերությունները («Ատտա Օրիջին», «Նոկիա-Կոլա», «Չեյնգո Էլեկտրոնիկս»)

Ռիկ», «Սենյուլայֆ», «Չոն-սոն Ենգ Չոնսոն», «Կոդակ», «Լեոնիդ», «Սակրոմալդո», «Օմեգա», «Փանասոնիկ», «Սամսունգ» և «Վիզա») հրաժարվել են որևէ կերպ հրապարակել մարդու իրավունքների ռոտահարումների դեպքերը օլիմպիական խաղերի ընթացքում:

Դիտակը վերջին մեկ տարվա ընթացքում բազմիցս փորձել է համազորժակցել նրանց հետ: Հովանավոր ընկերություններից յոթը հրաժարվել են, իսկ հինգի ներկայացուցիչների հետ հանդիպելուց հետո դիտակն արձանագրել է նաև լրատվության ազատության խաթարման, օլիմպիական շինարարության համար ներգաղթած աշխատողների իրավունքների ռոտահարման, ինչպես նաև դեպի խաղահրապարակներ ճանապարհ բացելու նպատակով հազարավոր քաղաքացիների տեղահանման դեպքեր:

Չինական բախումներ՝ մարդկանց գանգվածային տեղահանման պատճառ

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն և Ֆիլիպինների Կարմիր խաչի ազգային ընկերությունը համատեղ օգնություն են նախաձեռնել կառավարական զինված ուժերի և Մորո իսլամական ազատական ճակատի միջև տեղի ունեցած բախումների հետևանքով տեղահանված ավելի քան 80.000 բնակչությանը: Ըստ իշխանությունների հարցրած տվյալների շուրջ 130.000 մարդ Հյուսիսային Կորեայում ահաբեկիչ լքել է իր բնակավայրը, հանգրվանել այլ վայրերում, 2 անգամ էլ առայժմ հաստատվել են ժամանակավոր կացարաններում: 2008 թ. օգոստոսի 15-ից այս երկու կազմակերպությունները սնունդ, մաքուր ջուր և առաջին անհրաժեշտության պարագաներ են բաշխում տեղահանվածներին:

ՓՊՅՈՒՄ

Իսրայելն անտեսում է ՄԱԿ-ի Միջազգային դատարանի որոշումը

ՄԱԿ-ի ԱՆվանագրության խորհրդին Սերժավոր Արևելքում տիրող իրավիճակի մասին գեղիմոնիին գլխավոր քարտուղարի քաղաքական հարցերով տեղակալ Լին Պեկոնուն: Նա ներկայացրել է իսրայել-պաղեստինյան բանակցությունների ընթացքը հատուկ ուշադրություն դարձնելու մասն պաղեստինցիների մեջ մերթվել լարվածության աճին պայմանավորված Գագայի հատկաձուծում Համաս կազմակերպության գործողություններով:

Լ. Պեկոնուն չեղարկել է, որ իսրայելցիների և պաղեստինցիների միջև բանակցությունները Անապոլիսի համաժողովի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործման ուղղությամբ, շարունակվում են, բայց շատ հարցերում կողմերը մնում են անհաշտ: Արդյունքում Սերժավոր Արևելքում դեռևս մարդկային զոհեր են լինում, վերջին մեկ ամսվա ընթացքում իսրայել-պաղեստինյան

բախումների դեպքերի աճի հետևանքով 43 պաղեստինցի սպանվել է, 366-ը վիրավորվել:

Նշվել է, որ Իսրայելը անտեսելով միջազգային համարումն ու ՄԱԿ-ի Միջազգային դատարանի որոշումը, շարունակում է բաժանարար պատի կառուցումը: Գագայի հատկաձուծում պաղեստինյան օբյեկտների 97%-ը փակ է, վառելիքը սակավ: «Հրադադարը դեռևս նկատելիորեն չի բարելավվել Գագայի հատկաձուծման կենսապայմանները»,- հայտարարել է Պեկոնուն:

ՄԱՍ-ում դպրոցականները մարմնական դաժան պատիժների են ենթարկվում

«2006-2007 ուստարվա ընթացքում ավելի քան 200 հազար ՄԱՍ դպրոցականներ պատիժների են ենթարկվել օժեռ միջոցով»,- արձանագրել է Մարդու իրավունքների դիտակը և Ամերիկյան քաղաքացիական ազատության միությունը: Ընդ որում աֆրիկյան ծագմամբ ամերիկացի աղջիկները երկու անգամ ավելի շատ են օժեռ ենթարկվել, քան նրանց սպիտակամաշկ հասակակիցները:

Ըստ «Քիրտ Լորդոն» երեխաների մարմնական պատիժները ՄԱՍ դպրոցներում վերագրվելով 125 էալոնգ գեկույցի Տեխաս և Միսիսիպի նահանգները 3-19 տարեկան զոհեր բոլոր երեխաները ենթարկվում են ֆիզիկական պատիժների այնպիսի չարաճմուրդների համար, ինչպիսիք են, օրհնակ, մաստակ ծամելը, ուսուցչին հակաճառելը, մերթվել կանոնների խախտումները, կրկնամուրթունքը և այլն:

«Ցուրաբանչուր դպրոցում կարգապահական կանոններն անհրաժեշտ են, բայց երեխաներին օժեռլ են արմատավորում է բռնությունը չվերացնելով հանդերձ վատ արարքները: Անրմնական պատիժը մարում է կրթության ձգտումը և երեքն Ուոյնիսլ դրոնում վատ վարքաձոն»,- գրել է գեղիմոնիին Կլիսա Ֆարմերը: Պատիժների են ենթարկվել ազգամ մտավոր և ֆիզիկական արդատների ունեցող երեխաները: Արձանագրվել են դեպքեր, երբ երեխաները օժեռ հետևանքով մարմնական ծանր վնասվածքներ են ստացել:

ՓՁԷՄՆԱԻ ՈՎՔԱՅՈՒՄ

Ընդունվել է նոր սահմանադրություն

ՄԱԿ-ի մարդու իրավունքների փորձագետը ողջունել է Մոլդովյան կրգիներում նոր սահմանադրության ընդունումը՝ ասելով, որ այն երկրի ժողովրդավարական սկզբունքների հաստատման և արդարադատության անվստահության ապահովման առաջընթացի ցուցանիշն է: Գլխավոր մեղիմոնի կամ Սահմանադրական վեժաժողովի զոհեր չորս տարվա աշխատանքի արդյունք հանդիսացող նոր սահմանադրությամբ հաստատվում է արդարադատության մարմինների անվստահությունը: Այն նախատեսում է գերագույն դատարանի հիմնում, ինչպես նաև դատական հանձնաժողովի ստեղծում, որը կլինի դատավորների նշանակմամբ, հետագամբ և աշխատանքային կարգուկանոնի հսկողությամբ լիազորված անկախ մարմին:



ՁԵՌՔՆԵՐԴ ԶԵՌՈՒՄ ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ

ԹՄՅ ԾՄՅ ԴՅՃ

2008 թ. օգոստոսի 7-ին ԳՀ կառավարությունը հանդես է եկել Սևանա լճից ջրի բացթողումները մինչև 360 մլն խոր. մետր (նախորդ տարիների համեմատ՝ 2 անգամ ավելի) ավելացնելու օրենսդրական նախաձեռնությամբ: Նման քայլը պատճառաբանվում է արտակարգ բնակլիմայական պայմաններով, ջրի անբարձր ցածր մակարդակով, ջրապահանջարկի աճով և այլն:

Գիտնականների կարծիքով՝ Սևանա լճից ջրի բացթողումների կրկնապատկումն անընդունելի է վտանգավոր է 2008 թ. ոռոգման ջրի պահանջարկի աճի վերաբերյալ հիմնավորումները խիստ թույլ են, իսկ բնակլիմայական պայմաններն այնպիսին չեն, որ նման անհրաժեշտություն ծագեր, մասնավորապես նախնի իսկ օրենսդրական փոփոխություն էր կատարվել 2008 թ. հունիսին, և բացթողման ծավալներն ավելացվել էին մինչև 240 մլն խոր. մետր:

Սևանա լճից ջրառի նորից կրկնապատկման ծրագիրն անհասկանալի պատճառներով չի ներկայացվել բնապահպանական փորձաքննության: Դրա մասին նախապես չեն իրազեկվել ոչ միայն բնապահպանական հասարակական կազմակերպությունները և փորձագետները, այլև Սևանա լճի շրջակա բնակչությունը:


Մինչդեռ նախաձեռնության իրական պատճառները հասկանալի են բոլորի համար... Իշխանությունները փորձում են փրկել որոշ օլիգարխների անօրինական կառույցները, որոնք ջրատույզ են լինելու լճի մակերևույթի բնական բարձրացման հետևանքով: Զեղրական անգամ գոհասեղանին են դրվում հանրության և գալիք սերունդների սեփականություն հանդիսացող ռեսուրսները՝ հազարավոր տալով մի խումբ ընչաքիչ մարդկանց անձնական շահերին...

ՎՏԱՆԳՎԱԾ ԵՆ
Հայաստանի համար կարևորագույն ռազմավարական նշանակություն ունեցող քաղաքահամ ջրի պաշարը և Սևանա լճի ողջ էկոհամակարգը:

Սևանի, երկրի ընդերքի համաձոնների, անտառների, կենսառեսուրսների ճակատագիրը պետք է որոշվի դրանց սեփականատիրոջ՝ Հայաստանի ժողովրդի անմիջական մասնակցությամբ: Իսկ որոշումները պետք է ընդունվեն գիտական հիմնավորումներով և թափանցիկ գործընթացների հիման վրա:

ՄԵՆԵ ԴԵՏԷ ԵՄՍԱՆԿԻՑ ԴՊՈՒՆԱԶ ՍԵՐ ՀԱՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՏՏՕՐԻՍՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ...

Սևանի պաշտպանության նախաձեռնություն



Վերջը Բաշինջադյան. «Սևանը գերելով»

Սևանա լճի հիմնախնդրի առնչությամբ Բաղաբազմաբան ազգային նախաձեռնությունը (ՔԱՆ) 2008 թ. օգոստոսի 14-ին կազմակերպել էր «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնում. ժամանակավոր դադարի վերականգնման գործընթացում, թե՛ անջանկալի վերջնահանգրվան» քննարկող շահագրգիռ քննարկումներ ԳՀ գործադիր և օրենսդիր իշխանությունների, ԳՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, բնապահպանական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և լրագրողների մասնակցությամբ:

Քննարկման առաջին բանախոսը Հայաստանի Հանրապետության ջրային տնտեսության պետական կոմիտեի ներկայացուցիչ Միեր Սկրտումյանն էր, ով կառավարության այս քայլը պատճառաբանեց երկրի գյուղատնտեսական տարածքներում առկա երաշտով և ոռոգման ջրի սակավությամբ: Նրա տեղեկատվության համաձայն՝ այսօրվա դրությամբ Սևանա լճից արդեն բաց է թողնվել 213 միլիոն խորանարդ մետր ջուր, ընդ որում ոռոգման սեգորն ղեռնակարտված չէ, և հավելյալ ջրառի անհրաժեշտություն կա: «2008 թ. ընթացքում տարեկան մինչև 360 միլիոն խորանարդ մետր չափաքանակով ջրառը բացասական հաշվեկշիռ չի ապահովի Սևանա լճի մակարդակի համար, և այս առումով մտահոգությունները հիմնավոր չեն», - նշեց Սկրտումյանը:

Հաջորդ բանախոսը՝ ԳՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հիդրոկոլոգիայի և ձկնաբուծության ինստիտուտի փոխտնօրեն Էվելինա Ղուկասյանը, նշեց, որ տակնի վերականգնված չէ լճի հատակում մեկուսացնող շերտը, որը չի հիմնամաքման հնարավորություն է տալիս. հենց դա է եղել գիտական այն հաշվարկների հիմքը, ըստ որոնց՝ Սևանա լճի մակարդակը պետք է բարձրացվի առնվազն 6 մետրով: Ինչ վերաբերում է Սևանա լճի ջրի հաշվին ոռոգման կարիքները բավարարելու՝ ԳՀ կառավարության մոտեցմանը, նա նշեց, որ «Սևանա լճից վեր է անվել էժան ջրային աղբյուրի, որը կարելի է սպառել՝ առանց այլ ծախսեր կատարելու: Առանց այն էլ լիճը գտնվում է անկայուն վիճակում, և յուրաքանչյուր տատանում՝ լճի մակարդակի բարձրացում կամ իջեցում, կարող է վճռորոշ նշանակություն ունենալ»:

«Համուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիայի» նախագահ, ՍԱԿ-ի բնապահպանական ծրագրի ազգային կոմիտեի ներկայացուցիչ Կարինե Դանիելյանը ներկայացրեց Ազատի և Ապարանի ջրամբարների՝ իրենց վերջին դիտարկումների արդյունքները (տես ստորև բերվող աղյուսակը), որոնք թեպետ փաստում են ջրամբարների ոչ լրիվ չափով լցված լինելու մասին, սակայն պատկերը տարբեր է նաև կառավարության ներկայացրածից:



Վերջը Բաշինջադյան. «Կատարյալ լռություն»

(աղյուսակում բերված տվյալներից պարզ երևում է, որ 1999 և 2000 թթ. Ապարանի և Ազատի ջրամբարներում ջրի ծավալն այնքան շատ չի եղել 2008 թ. համեմատությամբ, որ դա հիմք ծառայի Սևանից ջրառը կրկնապատկելու համար: Ընդհանրապես, 2008 թ. այդ փվղ ավելի մեծ է, քան 1999 և 2000 թթ.): 4. Դանիելյանը տարակուսաբերվ հարցադրեց, թե ինչու պետք է 2008 թ. ջրառի չափը առնվազն կրկնակի գերազանցի նախորդ տարիների ջրառի չափաքանակը:

Քննարկմանը մասնակցող ուղրտի այլ

մասնագետներ Արարատյան դաշտավայրի համար վտանգավոր համարեցին բացառապես Սևանա լճի ջրով ոռոգումը, ինչը հրի է հողերի արդյունության տոկոսի բարձրացման վտանգով: Սևանա լճի ջրուր ոռոգման համար անբավարար ցուցանիշներ ունի, չնայած ստեղծված վիճակում այն միակ այլընտրանքն է դարձել:

Քննարկման մասնակիցները սկզբունքորեն դեմ արտահայտվեցին Սևանա լճից բաց թողնվող ջրի չափաքանակը բարձրացնելու՝ կառավարության օրենսդրական նախաձեռնությանը:

Ապարանի և Ազատի ջրամբարների ծավալը 2008 թ. մայիսի 16-ի դրությամբ, Հրազդան գետի հոսքը վեգետատիոն շրջանում և ջրթորը Սևանա լճից, մլն խ. մ.:

	1999	2000	2008
Ապարանի ջրամբար	18,6	31,1	27,9
Ազատի ջրամբար	34,6	38,6	49,5
Գունավոր	53,2	69,4	77,4
Ջրթորը Սևանից	196,76	189,97	360?

ԽՄՔԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏԵ



Խաչիկ Կարաբեկյան «Սևանի համակի ժայռեր»

Եթևկուրավարը Սևանա կղզի այցելած ովիտակորներին պատմում էր. «Դուք կանգնած եք սրբազան հողակտորի վրա. այստեղ թշնամին երբեք ոտը չի դրել»: Զետո նա պատմեց, որ 10-րդ դարում արաբ նվաճողը, չկարողանալով գեղեր ուժով նվաճել կղզին, հրավիրում է իր զորականներին ու խորհրդականներին քննարկելու կղզին գրավելու մարտավարությունը: Քննարկում են նաև ջրուր Հրազդան ուղղությամբ բաց թողնելու միջոցով լիճը ցամաքեցնելու և այդպիսով կղզին գրավելու տարբերակը: Սակայն թշնամին չի հաջողում:

Բայց սհա այն, ինչ դարեր առաջ չհաջողվեց թշնամուն, հաջողվեց հայ բուշեիկներին կոմունիստներին:

Կոմունիստներն իրենց բազում չարագործությունների համար չդատապարտվե-

ցին: Խախտվեց պատմի անխուսափելիության սկզբունքը, ու նախադեպը շարունակվում է: Սակայն ժողովրդի, սերունդների, պատմության ու վերջապես Արարչի պատմի անխուսափելիությունն անկասելի, անխուսափելի է ու ոչ միայն այս ջրազրկված ժայռեր, այլև Արարչի ու բնության գործերին անխիտեն միջամտության համար:

Եվ արդյո՞ք այդ իսկ անպատեհիությունը չէ պատճառն այն օրինագծի գոյության, որն Ազգային ժողովը ընդունեց որոշելով կրկնակի ավելացնել ջրթորը հոգեվարքից մոր-մոր ուշքի եկած Սևանից...

Ժողովուրդը փաստորեն ներեց կոմունիստների 70 տարվա բազում չարագործությունները հարյուր հազարավոր անմեղ մարդկանց գնալախարությունները, աքսորը, կուլակաթափությունները, հարստահարումներն ու բաց «երկնի տակ թանգարան» համարվող մեր ավետյաց երկրի «բաց երկնի տակ բանտի» վերածելը:

Ժողովուրդը, մեր հայրենի հանդուրժեցին: Սակայն սերունդները չեն ներելու կոմունիստների առնվազն երկու չարագործություններ. Կարսի պայմանագրի ստորագրումն ու դրանով մարդի բռնազավթմանը համամայնություն տալը և Սևանա լիճը խեղճադանելը:

ԱՌՕՐԵՑԱ ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՔՆԵՐ



ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 Թ. ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 810-Ն ՈՐՈՇՈՒՄ ՕՊԵՐԱՏԻՎ-ՅԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՅԿԱՅՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ժողովրդավարության ու մարդու իրավունքների, ազատությունների սկզբունքները որդեգրած մեր կառավարության սույն որոշումն ակնհայտորեն խիստ խնդրահարույց է: Կարողացե՛ք ու տեսե՛ք, թե որքանով է պաշտպանված, օրինակ, անհատի անձնական կյանքի գաղտնիության սահմանադրական իրավունքը...

Համաձայն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատել է օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ (մշակված, ծրագրված, հարմարեցված) տեխնիկական միջոցների ցանկը:

Ց Ա Ն Կ

- 1. Տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ, որոնք հատուկ նախատեսված են բնակարանների կամ այլ տարածքների գաղտնի տեսահսկման և գաղտնալսման, դրանցում տեղի ունեցող իրադարձությունների ու խոսակցությունների հսկման և ձայնագրման համար, ինչպես նաև ստանդարտ տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ, որոնք հարմարեցված կամ լրացուցիչ մշակված են այդ նպատակների համար:
2. Տեխնիկական միջոցներ, որոնք հատուկ նախատեսված են համակարգչային ցանցեր և համակարգեր անհետք ներթափանցելու, դրանցում մուտքագրվող, պահվող, մշակվող կամ հաղորդվող տեղեկությունը կրո-

- զելու (փոփոխելու, ոչնչացնելու) և ամրագրելու հնարավորություն ստեղծելու համար:
3. Տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ, որոնք հատուկ նախատեսված են առանց բանալիների բեռնիմացի մեխանիկական, էլեկտրամեխանիկական, էլեկտրոնային և այլ կողմից սարքերը բացելու ու փակելու համար, ինչպես նաև ստանդարտ տեխնիկական միջոցներ, որոնք հարմարեցված կամ լրացուցիչ մշակված են այդ նպատակների համար:
4. Տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ, որոնք հատուկ նախատեսված են հեռախոսային խոսակցությունների կամ հաղորդագրությունների (SMS, MMS, ֆաքս, e-mail հաղորդագրություններ և այլն), համացանցում և ձայնատանքի գաղտնի վերահսկման, գաղտնալսման և ձայնագրման համար, ինչպես նաև ստանդարտ տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ, որոնք հարմարեցված կամ լրացուցիչ մշակված են այդ նպատակների համար:
5. Տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ, որոնք հատուկ նախատեսված են նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնի վերահսկման համար, ծրարի, փաթեթի (արտաքին թաղամթի) անհետք բացման և վերականգնման կամ առանց բացելու, ինչպես նաև ստանդարտ տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ, որոնք հարմարեցված կամ լրացուցիչ մշակված են այդ նպատակների համար:
6. Տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ, որոնք հատուկ նախատեսված են առարկաները նույնացնող (թրթադրամներ, իրեր, փաթեթներ, փաս-

- տաթեր և այլն) անտեսանելի նշանների տեղադրման համար, ինչպես նաև ստանդարտ տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ հարմարեցված կամ լրացուցիչ մշակված այդ նպատակների համար:
7. Տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ, որոնք հատուկ նախատեսված են շարժական և ոչ շարժական ռադիոտեղորոշման համար, ինչպես նաև ստանդարտ տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ հարմարեցված կամ լրացուցիչ մշակված այդ նպատակների համար:
8. Տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ, որոնք հատուկ նախատեսված են ծայրային եղանակով մարդու հոգեֆիզիոլոգիական գործընթացների ակամա փոփոխության, անկեղծությունը բացահայտելու համար, ինչպես նաև ստանդարտ տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ հարմարեցված կամ լրացուցիչ մշակված այդ նպատակների համար:
9. Տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ, որոնք հատուկ նախատեսված են իրերի և փաստաթղթերի գաղտնի հետազոտման համար, ինչպես նաև ստանդարտ տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ՝ հարմարեցված կամ լրացուցիչ մշակված այդ նպատակների համար:
10. Տեխնիկական, այդ թվում՝ նաև ծրագրային միջոցներ, որոնք հատուկ նախատեսված են անձանց, տրանսպորտային միջոցների և այլ օբյեկտների տեղաշարժի գաղտնի հսկման համար, ինչպես նաև ստանդարտ տեխնիկական՝ միջոցներ հարմարեցված կամ լրացուցիչ մշակված այդ նպատակների համար:

ՀԱԶՈՂՎԵՑ ԿԱՆԽԵԼ ԿԱՆԱԶ ՏԱՐԱԾՔԻ ՈՉՆՉԱՅՈՒՄԸ

2008 թ. օգոստոսի 16-ին Երևան քաղաքի Մաշտոցի պող. թիվ 39/12 և Թամանյան 2 և 2^ա շենքերի բնակիչները դիմել էին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին և հայտնել, որ նույն օրը ժամը 11³⁰ դրոշյամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ ներկայացուցիչները հողային աշխատանքներ կատարելու նպատակով շենքի բակ են բերել տեխնիկա և ոստիկանների միջամտությամբ փորձում են փորել շենքի բակում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքի (խաղահրապարակ) մի հատվածը: Պաշտպանի համեմարարության մեջ ստեղծված արագ արձագանքման խունքն անմիջապես մեկնեց դեպի վայր:

համաձայնեցված նախագծերի և տրված շինարարության թույլտվությունների գործողությունը, Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցը գազնախիտել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետին հայտնելով, որ քաղաքապետի որոշման կատարումը համեմարարված է նաև իր վարչությանը, և խնդրել է ուղարկել համապատասխան մասնագետ որոշման կատարումն ապահովելու համար: Վարչության պետը հայտնել է, որ ինքը համոզված չէ, որ դա կանաչ գոտի է, և դրա պարզման հարցը իր գործը չէ: Հայտնել է նաև, որ ինքը պատկերացնում է իր աշխատանքի գործառնությունը, իրեն հուշելու անհրաժեշտություն չկա, և իրաժարվել է որևէ մեկին ուղարկել վերոնշյալ տարածք:

Տեղում կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Եշված բակային տարածքից 39 մ² մակերեսով հողատարածքն օտարվել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին էլեկտրական կառուցելու համար: Երևան քաղաքի աշխատանքներ կատարելու համար տրվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք, համաձայնեցվել է նախագիծը, տրվել շինարարության թույլտվություն:

Քաղաքապետի վերոնշյալ որոշման մասին իրազեկվել են նաև ոստիկանության ներկայացուցիչները՝ հայտնելով, որ իրենք այդտեղ են գտնվում հասարակական կարգը պաշտպանելու համար:

Տեղում էին նաև ՀՀ բնագիտականության նախարարության բնագիտական պետական տեսչության երկու աշխատակիցներ, ովքեր հայտնեցին, որ արձանագրություն կկազմեն ծանր հատվելու դեպքում:

Մարդու իրավունքների պաշտպանի և Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ. Արեյանի հեռախոսազրույցի արդյունքում, վերջինիս համեմարարությանը տվյալ վայր այցելեցին քաղաքապետի տեղակալ Կ. Դավթյանը, Երևանի գլխավոր ճարտարապետ Ս. Դանիելյանը, քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Խուրշուդյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության պետը և այլ անձինք: Վերոնշյալ պաշտոնատար անձանց, կառուցապատողների և շենքի բնակիչների միջև տեղի ունեցած բեմախմբման արդյունքում համեմարարվեց դադարեցնել տվյալ վայրում շինարարական աշխատանքների կատարումը մինչև քննարկումների ավարտը:

Նկատի ունենալով, որ Պաշտպանի կողմից այլ բողոքի քննարկման արդյունքում պարզվել էր, որ Երևանի քաղաքապետը համեմարարել էր Երևանի գլխավոր ճարտարապետին, քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության, ճարտարապետության և քաղաքաշինության վարչություններին՝ դադարեցնել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում իրականացվող շինարարական աշխատանքները և կասեցնել հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, դրանք հիման վրա

ՕՐԵՆՔ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՒՄ Է ԿԱՌՈՒՅԵԼ ՀԱՍԱՐԿԱԿԱՆ ՊԵՏՔԱՐԱՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության 2008 թ. հունիսի 16-ի N 44(634) պաշտոնական տեղեկագրում տպագրվել է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը: Ըստ ծանուցման «հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերը պետք է ապահովված լինեն օրենսդրությանը համապատասխան կառուցված վճարովի կամ անվճար հասարակական զուգարաններով»: Ընդ որում՝ վերոնշյալ և առևտրի իրականացման վայրերը պետք է ապահովված լինեն մուտքի մոտ տեղակայված վճարովի կամ անվճար զուգարանների առկայության մասին տեղեկացնող և գտնվելու տեղի վերաբերյալ Եշում պարունակող ցուցանակով:

Նշված պահանջների չկատարելը կարող է առաջացնել տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի հիսամասապատիկից մինչև յոթանասուներկուապատիկի չափով:

Օրենքն ուժի մեջ է մտնում 2009 թ. հուլիսի 1-ից՝ ՀՀ բնակավայրերում գործող առևտրի իրականացման վայրերի և հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերի համար, իսկ 2008 թ. հոկտեմբերի 1-ից՝ ՀՀ բնակավայրերից դուրս միջպետական, հանրապետական, միջհամայնքային նշանակության ճանապարհներից գործող առևտրի իրականացման վայրերի և հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերի համար:

ՄՈՌԱՅՎԱԾ ՃԱԿԱՏԱԳՐԵՐ.

ՈՏՆԱՅԱՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հանուն մեկ ընտանիքի ճակատագրի հարկ է անդրադառնալ տարիներ առաջ կատարված գործերի, տեղի ունեցած դեպքերի, իրադարձությունների: Հարկ է վերհանել ճշմարտությունը մարդկային բարի գործերի ու, ցավոք, նաև անտարբերության մասին: Պատմություն, որի ծավալը կազմում է տասնյակ գրավոր էջեր...

Լեռնիկ Սարիբեկյանի համար այդպես էլ անհասկանալի, անբացատրելի է մնում անտարբերությունը, քանզի նորաստեղծ պետության համար ծանր պայմաններում իր ընտանիքը ոչինչ չի խնայել երկրի ու նրա խոցելի բաղաբաղիների համար:

Ավերիչ երկրաշարժի, Ղարաբաղյան հակամարտության և Խորհրդային Միության փլուզման ժամանակահատվածում ծագած խնդիրների լուծման գործում Լեռնիկ Սարիբեկյանի ընտանիքն իր մասնակցությունն ունեցավ՝ մարդասիրական գործունեություն ծավալելով և 1992-98 թթ. ընթացքում աջակցելով Ղարաբաղից տեղահանված 42 փախստական ընտանիքների՝ թվով 145 մարդու: Այս ընթացքում որդու՝ Սրապ Սարիբեկյանի հետ մանկատուն է հիմնել՝ շուրջ 4 տարի՝ 1994-1997 թթ. խնամելով ու դաստիարակելով 40 ծնողազուրկ երեխաների:

1997 թ. մարտին կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) ներկայացուցիչ, Ֆրանսիացի բարերար Իզաբել Քենոլլի միջնորդությամբ ու աջակցությամբ Սրապ Սարիբեկյանը սկսեց մեծածախ մատակարարություններ կատարել Սրապի և Մուսկվա՝ կազմակերպելու ԿԽՄԿ-ի հատկացրած մարդասիրական մեծածախ օգնության՝ դեղորայքի և բժշկական սարքավորումների փոխադրումը Ֆրանսիայից Ղարաբաղ, որի համար անհրաժեշտ էր յոթ խոշոր բեռնատար ավտոմեքենա: Սակայն անսպասելիորեն Ռուսաստանի Ռուսա քաղաքի մոտակայքում Սրապն աղետի է ենթարկվում: Հանկարծառից դժբախտության հետևանքով Սարիբեկյան ընտանիքը հայտնվում է գրեթե անեկանելի կացության մեջ:

Կա շրջադարձ էր. ծախսողովում է ոչ միայն մարդասիրական օգնության տեղափոխումը: Սարիբեկյան ընտանիքին այդ ծանր վիճակում ոչ ոք ձեռք չի մեկնում: Տասնհինգ տարի է անցել այդ օրերից: Որևէ զմայականից, փոխհատուցման ակնկալից՝ այլևս անմիաստ և անհնար է թվում:

Նախապատմություն: Երկրաշարժից հետո Սարիբեկյան ընտանիքը աղետյալ Կիրովական (այժմ՝ Վանաձոր) քաղաքից տեղահանվում է՝ հաստատվելով Գուգարք գյուղում՝ այնտեղ գործարան նախատեսված զբոսայգի Օսնիկի շինմանը պատկանող բանվորական ճաշարանը, հիմնելով մի շարք փայտանշակման, գորգագործական օգնության տեղերի, ավտոմարտկոցների, հաց-հրուշակեղենի, կաթնամթերքի և կարի արտադրամասեր: 1992 թ. հուլիսին այստեղ են գալիս Ղարաբաղի Շահումյանի և Մարտավերտի շրջանների բռնի տեղահանված 42 ընտանիքները: Նախկին Գուգարքի շրջանի կոմկուսկոմիտեի և շրջխորհրդի որոշմամբ փախստական ընտանիքներին է հատկացվում արտադրամասերի հարևանությամբ գտնվող բանվորական հանրակացարանը: Գուգարքի նախկին շրջանային կուսկոմիտեի երկրորդ քարտուղար Գագիկ Միկիչյանի և Գուգարքի շրջկոմի նախագահ Ռազմիկ Բոջուկյանի միջնորդությամբ համաձայնության են գալիս, որ փախստական ընտանիքները խնամելի գործը կտանձնեն Լ. Սարիբեկյանի ընտանիքը: Որոշվում է, որ կատարված նյութական ծախսերն ու մատուցած ծառայությունները երկրում իրավիճակի կայունացումից հետո կփոխհատուցվեն: Պետական մարմինները և պարտավորվում են



Վանաձորի «Սոսի» մանկատան սաները Սարգոս իրավունքների գրադարանում, 1996 թ.

փախստականներին ապահովել սննդամթերքով: Հանապատասխան **պայմանագրերի ու իրավական ձևակերպումների մասին լռելով, այդ դժվարին պահին անընդունելի, գրեթե անբարո համարելով՝ Սարիբեկյան ընտանիքն այդ պարտավորությունը ստանձնում է զուտ բանավոր պայմանավորվածության հիման վրա:**

Սարիբեկյան ընտանիքն սկսում է հոգալ փախստականների պահանջներն ու կարիքները: Որպես կացարան հատկացված բանվորական հանրակացարանը լքված ու քայքայված վիճակում էր: Սարիբեկյաններն իրենց ընտանիքի սեփական միջոցներն են ի պատճառ դնում կարիքավոր ընտանիքներին պատշաճ կենսապայմաններով ապահովելու համար:

Լեռնիկ Սարիբեկյանն այսօր տարիների հեռավորությունից հիշում է. «Սպասել մինչև իմ հուսարդեղով փախստականներին հետ միասին ապրեցինք երկու դժվարին տարիներ: Փոխվեց պետության կառավարման համակարգը, սակայն փախստականների վիճակը մնաց նույնը»:

1994 թ. Վանաձորի քաղաքապետարանը բարեգործներին որպես աջակցություն խոստանում է կայացած, կանոնավոր գործունեություն ծավալած մանկատանը արտոնյալ պայմաններ և պետական կարգավիճակի շնորհիվ: ԿԽՄԿ ներկայացուցիչ Իզաբել Քենոլլին մանկատան սաներին ապահովելու հազարավոր դրամներ է հաշտեցրել: 1994 թ. ծնունդանուր հավաքագրվում են և 32 ծնողազուրկ, բախտառական երեխաներ՝ ընդհանուր թվով շուրջ 40 երեխա, որոնց հոգավոր, խնամելու ու դաստիարակելու համար Սրապ Սարիբեկյանը դիմում է տարբեր բարեգործների:

Եղած նյութական միջոցները, որ գոյանում էին կահույք, լուսամուկի, ավտոմեքենաների մարտկոցներ, գորգեր, հաց ու հրուշակեղեն, կաթնամթերք արտադրելուց, արդեն սպառվում էին:

Մանկատուն է այցելում նաև Գարեգին Առաջին վեհափառ հայրապետը՝ իր օրինությունը բերելով մանկատան սաներին, աշխատակազմին, հուսարդեղով նաև աջակցել մանկատանը պետական կարգավիճակի շնորհիվ գործում: Վանաձորի քաղաքապետ Անդրանիկ Հարությունյանն աջակցություն է ցուցաբերում՝ հնարավորություն տալով դիմաց քաղամասի տարածքում շարժական բեռնաշրջան գործարկել: Երգիչ Արամ Սաստրյանն իր երկու համերգների հասույթը փոխանցում է մանկատանը:

«Ղրտեկ» ճամբարի տարածքում հաղթահարվում են երկու ցրտաշունչ ձմեռներ:

«Սրապ Սարիբեկյանը դիմում է Գուգարք գյուղում գտնվող կարի արտադրամաս միավորման գլխավոր տնօրեն Արմեն Խաչատրյանին՝ խնդրելով, որ իր տնօրինության ներքո գտնվող մանկապարտեզի չգործող մասնաշենքը տրամադրի մանկատան սաներին՝ ժամանակավոր, մինչև մանկատանը պետական կարգավիճակի շնորհիվ: Վերջինս անտրանց ընդդաշնում է». - երախտագիտությանը հիշում է Լ. Սարիբեկյանը:

1997 թվական: Իզաբել Քենոլլիին հաջողվել էր համաձայնության գալ կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ՝ մարդասիրական օգնության հասցնելու մանկատանը: Սրապ Սարիբեկյանը պետք է մեկնե՝ Ֆրանսիա, սակայն միջոցներ չունենալով՝ դիմում է մոսկվաբնակ գործարար Արայիկ Բոթանջյանին՝ մարդասիրական օգնության բեռնափոխադրում կազմակերպելու և իրականացնելու համար: Մանկատան տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելով տնտեսական գծով տնօրենի տեղակալ Մարտ Աբրահամյանին՝ Ս. Սարիբեկյանը մեկնում է Ռուսա, ուր Ֆրանսիա մեկնելու նախորդ օրն ավտոկթորի է ենթարկվում: Սրապին հիվանդանոց տանելու ծանապարհին սրտի կաթվածից հանկարծ-

մահ է լինում Արայիկ Բոթանջյանը: Մարդասիրական օգնության փոխադրումը Հայաստան ձայնողովում է:

Սարիբեկյան ընտանիքին պատահած դժբախտությունից օգտվելով՝ «կողմնակալ և «ճարպիկ» մարդիկ, շահադիտական նպատակներ հետապնդելով, արագորեն պետական կարգավիճակ ձեռք բերեցին մանկատան համար, ու նշանակվեց նոր ղեկավար»,- ցավով պատմում է Լ. Սարիբեկյանը: Մանկատան աշխատակազմի 15 անդամներից 13-ը գրվեցին աշխատանքից, ոտնահարվեցին շուրջ չորս տարի սեփական նյութական միջոցները, ժամանակը, կյանքն ու հոգին ներդրած բարեգործ ընտանիքի բարոյական իրավունքները:

Միաժամանակ կատարվում է ամենբեղին. ոչնչացվում են մանկատան այդ տարիների գործունեության ամենվոր բոլոր փաստաթղթերը՝ իրավական և բարոյական մոռացություն մատնելով Սարիբեկյան ընտանիքի բարեգործական կենսագրության չորս տարիների ժամանակահատվածը:

1996-1998 թթ. սկսվում է փախստական ընտանիքների տուժարածը. ոմանք մեկնում են Ղարաբաղ, մյուսները՝ Վրչ երկրներ: Երանց մեկնելուց անցել է 10-12 տարի: Իսպառ մոռացություն նաև նրանց կողմից. միայն շահույնային հովիվ և էլ-միրա Սակարյանների ընտանիքն է երախտագիտությանը հիշում և կապ պահպանում Լեռնիկ Սարիբեկյանի հետ:

Գրեթե անեկանելի վիճակում հայտնված խնամակալ ընտանիքն աստիճանաբար կորցնում է ամեն ինչ՝ հարկադրված լինելով իրական արժեքից բազմապատիկ ցածր գներով վաճառել տարիների ընթացքում վատնակալ և պարտքերի բեռնա տակ հայտնվել, որի ծանրությունը ազատվել չի հաջողվել մինչև օրս:

Դժբախտությունը միայնակ չի գալիս: Լ. Սարիբեկյանի մայրը, տարիներ շարունակ տառապելով հոգեկան հիվանդությունից, ավանդում է հոգին: Կինը՝ Սարիբեկյանը, ով բարեհոգ, սիրալիկ մոր պես խնամում էր փախստականներին, մասնակատան երեխաներին, աբորտելի հիվանդությունից մահանում է՝ ամուսնուն թողնելով առավել անսփոփ, միայնակ ու անհուսալի վիճակում:

Այսօր Լեռնիկ Սարիբեկյանն ուրախությամբ է նշում, որ ժամանակի ընթացքում պետության կիճքը կայունացավ, մանկատաների և հասարակության խոցելի խնդրի նկատմամբ անհրաժեշտ ուշադրություն ու հոգատարություն ձևավորվեց, մերօրյա բարեգործները գնահատվեցին և գնահատվում են որևէ կերպ: Բայց չէ՞ որ իր ընտանիքը նույնպես և առավել ծանր պայմաններում ընդամենը բարի գործեր է կատարել: Իհնչ՞ է այս ամենը լուրջան մատնված...

Լ. Սարիբեկյանն ակնկալում էր արժանապատիվ վերաբերմունք: Ընդունելի՞ է արդյոք այդքան զրկազքներից, ցնկորմից հետո իր և ընտանիքի իրավունք և բարոյական իրավունքների ոտնահարումը:



ՄՇԱԿՈՒՅԹ

2È²¹°ð, àò Å²¹°ð²Î²Û ÎÚ²ÛøÛ àò

«Իրավական մշակույթ» թերթի 2008 թ. ապրիլի 30-ի 7-րդ համարում տպագրել էինք Արմեն Տեր-Քառայանի «Թվում է՝ դեռ գործում է Ալավերդու թատրոնը» վերնագրով ակնարկը Ալավերդի քաղաքի պետական թատրոնի և նրա ճանաչված դերասանների մասին: Ակնարկագրի մտորումներից ընթերցողը կարող էր եզրակացնել, որ Ալավերդի քաղաքում թատրոնը դադարել է գործել:

Վերջերս խմբագրությունն ստացավ մի նամակ, որում ՀՀ պետական պատկերասրահի Ալավերդու մասնաճյուղի գիտաշխատող Ֆյորա Մելչույանը մեղմորեն առարկում է Արմեն Տեր-Քառայանի հեղինակած հիշյալ կարծիքին:

Ստորև տպագրում ենք Ֆ. Մելչույանի նամակն ամբողջությամբ և Արմեն Տեր-Քառայանի արդեն շարկումներով ու լավատեսությամբ լեցուն ակնարկը:

ԼԱՍԿԱ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Հարգելի խմբագրություն:

Հուզմունքով կարդացից մեր համաքաղաքացի Արմեն Տեր-Քառայանի «Թվում է՝ դեռ գործում է Ալավերդու թատրոնը» վերնագրով ակնարկը:

Մեր այնքան առջև ասես ես սահեց ժամանակը, կրկին վերապրեցիք երջանիկ երիտասարդություն, ինչը քաղցրամուն էր նաև իսկապես տաղանդավոր դերասաններով առատ մեր պետական թատրոնի ներկայացումներով: Ուստի նախ շնորհակալություն «Իրավական մշակույթ»-ի խմբագրակազմին մեր քաղաքի պետաթատրոն վերհիշելու համար: Սակայն հարկ է հողվածագրի խնդրել, որ ես պատմի պետաթատրոնի հաջողած գույգ ժողովրդական թատրոնների մասին, որոնց կյանք տվեցին արդեն նախկին թատրոնի դերասանները:

Գիտե՞ք, որ Արմենը ժամանակին խաղացել է այդ գույգ թատրոններում կերտելով մի շարք ուշագրավ դերեր, ուստի համոզված եմ, որ ես ներկայումս գործող, արդեն փորք-ինչ մնափոխված մեր թատրոնի մասին ավելի հետաքրքիր ու դիպուկ ակնարկաշար կստեղծի:

Ալավերդի թատերասերների անունից
Ֆյորա Մելչույան
ՀՀ պետական պատկերասրահի Ալավերդու մասնաճյուղի գիտաշխատող

Ալավերդու երբեմնի պետաթատրոնի արվեստագետներից բացի՝ ես չփվեցի նաև պետաթատրոնի հաջողած գույգ ժողաթատրոնների անձնակազմերի հետ, ուր և հանդիպեցի դրամատիկ օժտվածությամբ բարձրակարգ մի շարք դերասանների: Ներկայացնելով իմ քաղաքի արվեստագետներին՝ պատմեմ, թե ինչպես տեսա ու սիրեցի նրանց:



Հայկազ Ոսկանյան – Լոռու չքմա Մտուկորի Մարց գյուղում է ծնվել ռեժիսոր: Մանկությունն անցկացնելով հեթիքս բնաշխարհում՝ արվեստում ևս անկարող եղավ բաժանվել իրապատում առասպելից: Հ. Ոսկանյանը բեմում վերստեղծեց այդ հրաշք բնապատկերը, և հիմա, վերհիշելով նրա ներկայացումները, այնքան առջև պատկերանում է գողտրիկ թատերաձևավորումների էկզոտիկ հիասքանչությունը: Պատահական է չեմ հավանում, որ այդ բեմադրություններում բացակայում էին ընդգծված բացասական կերպարները. կարծես նրանց ներկայությունը կխամրեր, կխաթարվեր բեմադրողի լեզուն-հրաշապատումը: Եվ նրա կողքին գտնվողներս հայտնվեցինք մի աշխարհում, որ ծխամած Ալավերդի քաղաքում դարձավ գեղեցիկը գնահատողների կենսածնի փրկության կղզակը...



Լադիկ Վառդույան – Առաջին ծանոթությունը նրա հետ այնպիսի տպավորություն էր ստեղծում, ասես անընթաց նախապես հետ ևս առաջնորդում էր նրան հասկանալով, որ գործ ունես յուրօրինակ մարդու հետ: Լադիկ Վառդույան անհատը ծուլվում էր հոգուր, տարրալուծվում էր թեթև, ներաշխարհի մեջ դառնալով խիստ հարսզատ: Հայտնվելով նրա ընտանեկան խաղաղ հարկի ներքո՝ թվում էր աղավճիների մոգական բույն ես մտել պարուրված սիրտիս մեջ ու գործի տրամադրությամբ:

անձնագրող նկիրված արվեստագետները, եթե քաղաքը չգրկվեր պրոֆեսիոնալ թատրոնից: Թատրոնն զգայուն է: Տասնամյակներ առաջ կատարվածի կրկնությամբ՝ թատրոնի վերաբացման գործընթացը ձախողվեց... Թատրոնը կրկն լեցեց պալավերդի թատերասերներին, բայց Անահիտ Բեգզյանը չէր ոչ թատրոնը, ոչ գործընկերներին:



Հարություն Մարտիրոսյան – Նրա մարմնավորած բոլոր դերերը դիպուկ ու ճշգրիտ բնութագրված կերպարներ էին: Թատերական կյանքում իր գործընկերների հետ հարաբերություններում հնարավոր խմորումներից հեռու էր:

Նա սրտում պարփակեց իր նկատմամբ կատարված ոտնձգությունները և երբեք չբարձրաձայնեց հանրալի քայլերի, անարդարությունների մասին: Նա անասհամ ներողամիտ էր, հանդարտ ու առանձնացած իր գողտրիկ այգուն...

Նման պարկեշտ մարդկանց հետ չփվելով գիտակցում ես, որ կյանքը անհմատ ընթաց է, իսկ այդ արվեստագետների հետ մշտապես չփվելու ձգտումն այլևս անհրաժեշտություն է դառնում...

ՍՐՄՆԵ ՏԵՐ-ՔԱՌԱՅԱՆ
Բ. Ալավերդի



Էձնա Ալվանյան – Բնածին գեղեցկությունը, շքեղ շեկ վարները, արտահայտիչ դիմագծերը, հունորով համեմված արտատրոնի խոսքն ու զրույցները մարդկանց գրավում են, հնարում դեպի իրեն: Նա կյանքը լեցուն ու հետաքրքիր դարձնող անհատ է, ում ներկայությամբ չեզոքացանք եր անգամ բամբուկական քաղաքի ճակատագրական տաղտուկը: Իսկ բեմում նա պարզապես հրաշալի է: Չկա դեր, որ չկարողանա փայլուն կատարել: Երբեմն նույնիսկ այլ



Անահիտ Բեգզյանյան – Երբ 1989-1992 թթ. ժողովրդական արտիստներ Վոլոդյա Գրիգորյանն ու Վահե Շահվերդյանն Ալավերդի քաղաքում հիմնեցին փոքրիկ թատրոնը, Անահիտ Բեգզյանյանը ընդգրկվեց դերասանական կազմում. բոլորը հիացան նրա մարմնավորած կերպարներով:

Դառնաճում ես՝ մտածելով, թե ինչ բարձունքների կարող էին հասնել անշունչ միջավայրում թատրոնին

Հոկտեմբերին Հայաստանում կանցկացվի զրքի միջազգային տոնավաճառ



ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ 2008 թ. հոկտեմբերի 10-15-ը նախատեսվում է երևանում անցկացնել զրքի միջազգային ցուցահանդես-տոնավաճառ: Բոլոր հրատարակիչներն ու գրավաճառ ընկերությունները կարող են մասնակցության համար հայտեր ներկայացնել մինչև օգոստոսի 20-ը: Տոնավաճառը կանցկացվի Նկարչների միության վերամորթված ցուցասրահի առաջին հարկում:

Աղբյուր՝ Tert.am

նժՅՍ°ժՂÆ ²ձÃ°iàðàòØÀ

Արդեն անցյալում է եվրոպայի ֆուտբոլի առաջնությունը: Ֆուտբոլի գիտակ չլինելով՝ չեմ ցանկանում որևէ վերլուծություն կատարել դրա կազմակերպչական կողմերի կամ խաղերի վերաբերյալ, սակայն առաջնության ողջ ընթացքում ինձ համար բացահայտեցի մի իրողություն, որ զուցե ինքնին պարզ է, ու բացահայտելու կարիք էլ չկար, բայց ավելորդ չեմ համարում դրան անդրադառնալ: Ֆուտբոլային խաղի սկիզբն ազգարարող 2 երկրների օրհներգերի կատարումը, հատկապես ֆուտբոլիստների, ֆուտբոլայաներների և տվյալ երկրների բարձրատիճան այրերի շուքբեղից հնչելը սեփական երկրի նկատմամբ սիրո դրսևորում են: Մի քանի րոպաների ընթացքում միախառնվում էին արժանապատվությունը ու հավատը, հուզմունքն ու վստահությունը:

Հայերս սիրում ենք կրկնել, որ օտար երկրներում բարձր ենք պահում մեր դրոշի ու օրհներգի պատիվը, ձգտում ենք, որ այն հնչի՝ մեկ անգամ ևս Հայաստան երկիրը ներկայացնելով աշխարհին: Գուցե հայրենիքից դուրս իսկապես այդպես է, սակայն նույնը չէ Հայաստանում: Դեռևս նախակրթարանից մեր երեխաներին սովորեցնում ենք Հայաստանի Հանրապետության օրհներգը, դպրոցում նրանք շարունակ երգում են այն: Հետո գալիս է մի պահ, երբ թվում է՝ բոլորը գիտեն այն, ինչ պարտավոր են իմանալ նույնիսկ առանց հատուկ ուսուցման ու դասաժամերի: Սա տեսակարար է: Բայց... Բազմիցս ներկա եմ գտնվել տարբեր միջոցառումների և հանդիսությունների, նույնը դիտել հեռուստատեսությամբ: Երբ հնչել է օրհներգը, մարդիկ բավարարվել են միայն ոտքի կանգնելով: Բազմամարդ հավաքներում ընդամենը մի քանի մարդ է մասնակցել օրհներգի կատարմանը, մյուսները էլ թերևս հաշվել են րոպեները, թե երբ պետք է ավարտվի այդ «հոգնատանջ արարողակարգը»:

Սկզբում տպավորություն է ստեղծվում, որ մարդիկ ամաչում են կամ պարզապես չեն ցանկանում երգել, սակայն դժվար չէ կռահել, որ շատերը պարզապես չգիտեն օրհներգի բաները (շատերին մեր օրհներգը դուր չի գալիս, ոմանք էլ բաները չեն մտապահում, որոշ մասն էլ ավելորդ է համարում սովորել այն, ինչն առանց իրենց էլ կատարում են): Փաստորեն, 4-5 տարեկանից մեր գավառներին սովորեցնում ենք, ինքներս սովորում ու այդպես էլ ոչինչ չենք սովորում: Օրհներգի կատարումը պետք է հնչի աղոթքի պես, հենց իրեն արժանապատվության մարմնացում, սեփական երկրի նկատմամբ հարգանքի դրսևորում, ինչի ակնատեսը դարձանք ֆուտբոլային նշան առաջնության ընթացքում: Կարելի էր մայել ֆուտբոլիստներին և հիմալ նրանցով հենց միայն նրա համար, որ սրտանց, ոգևորությամբ կատարում են իրենց երկրի օրհներգը: Նաև այստեղից է սկսվում հայրենիքի, հայրենասիրության գաղափարների արժևորումը, այլապես վերամբարձ խաբեր միշտ էլ կարելի է արտաբերել:

ՍՐՄՆԵ ԴՐՈՒԿԱՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Յ Ց Թ - Ա Ջ Դ - Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ԻԷՔՏԻՆՆԱՅՆ ԳՆԱՀԱՆՈՒՄ 3/4 ԺԱՅԱՆՆԱԿՆԵՐԻ ԱՄՍԻ ԶԵՆՈՒՄՆԵՐԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՅԵ

Աշխարհի տարբեր երկրներից 1600 պատվիրակներ հավաքվել են Գանայում կլիմայի վերաբերյալ խորհրդակցությունների անցկացնելու և կլիմայի փոփոխության վերաբերյալ նոր համապարփակ նախագիծ մշակելու նպատակով: Հանդիպման հիմնախնդիրներից մեկն է մշակել ջերմային գազերի արտանետումների նվազեցման կարգ, որը կգործի 2012 թ.-ից և 2005 թ. փետրվարին վավերացվելով 175 երկրների կողմից: Ըստ արձանագրու-

թյան 36 արդյունաբերական զարգացած երկրներ պարտավորություն են ստանձնել կրճատել կամ սահմանափակել 6 տեսակի ջերմային գազերի մթնոլորտ արտանետման ծավալները: 5 տարվա ընթացքում 1990 թ. համեմատ նրանք պետք է նվազեցնեն գազերի արտանետումների ծավալը միջինը 5,5%-ով: օրինակ՝ ճապոնիան 6%-ով, Կանադան 8%-ով և այլն: 2012 թ.-ից հետո երկրները պիտի հետևողականություն ցուցաբերեն ընդունված փաստաթղթի արագ գործարկման ուղղությամբ:

ԸՍՏ ԱՆՈՂՋՆԱԿԱԽՈՒՅԱՆ ՀԱՄԱՀԱՐԿԱԿԻՆ ԿԱԳՆԱԿԵՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՅԵ

Ըստ առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ աշխարհում 2 մլրդ մարդ վարակված է հեպատիտ B վիրուսով: 350 մլն մարդ տառապած է այդ վիրուսի հետևանքով առաջացած յարդի խրոնիկական հիվանդությամբ: Մանկության շրջանում վարակված մեծահասակ մարդկանց 25%-ը մահանում է քաղցկեղից կամ յարդի հիվանդությունից: Փորձագետներն ուշադրություն են դարձնում այն բանի վրա, որ հեպատիտ B-ն հնարավոր է կանխարգելել

1982 թ.-ից հասանելի անվտանգ և արդյունավետ պատվաստանյութի շնորհիվ: Հիվանդությամբ վարակված առողջ մեծահասակների 90%-ը լիովին ապաքինվում է 6 ամսվա ընթացքում, 8-10%-ի մոտ այն դառնում է խրոնիկական: Քաղցկեղից մահացության հիմնական պատճառներից մեկը հեպատիտ B-ից առաջացած յարդի քաղցկեղն է: Կիրուսը տարածվում է վարակակիր մարդու արյան կամ օրգանիզմի այլ հեղուկների հետ շփման միջոցով:

ՈՒՇԱԿՐՈՒԹՅՈՒՆ



«Բյուրակն» կրթահամալիրը հայտարարում է ընդունելություն երևանի, Վանաձորի և Սևանի ուսումնական խմբերում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՈՒՆՁՆԱԿԱՑՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ.

- Յուրաքանչյուր աշակերտի համար կազմվում է անհատական ուսումնական ծրագիր՝ պետական չափորոշիչներին համապատասխան:
- Աշակերտը սովորում է սովորեցնում է: Ուսուցումը կազմակերպվում է անհատական, խմբային և փոփոխական զույգերով:
- Ուսումնական գործընթացը բաժանված չէ դասաժամերի, նյութի յուրացման համար չկա ժամանակի սահմանափակում:
- Ուսուցումը երկարությամբ է ժ. 9.00-16.00-ը (սնվելու երկու ընդմիջումներով):
- Աշակերտների փոխադրումը տուն-դպրոց-տուն կազմակերպվում է կրթահամալիրի միջոցներով:
- Ուսուցումը վճարովի է. ծնողների կողմից ուսման վճարից բացի որևէ հավելյալ վճարում չի կատարվում, ներառյալ գրեմական պիտույքների, դասաքրեքերի, ուխտագանացությունների և այլ ծախսերը:
Ընդունելությունը կատարվում է հարցազրույցով:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՏԵԼ.

Երևանի «Բյուրակն» կրթահամալիրում ընդունելություն է կատարվում հանրակրթական դպրոցի բոլոր տարիքային խմբերում: Հասցե՝ ք. Երևան, Պարոյր Սևակի 11 հեռ./հեռապատեմ (0 10) 28-40-80, (0 91) 28-40-80

«Բյուրակն» կրթահամալիրի Վանաձորի ուսումնական խումբ կարող են ընդունվել տարրական դպրոցի 6-9 տարեկան երեխաները: Հասցե՝ ք. Վանաձոր, Ժիրակացու 1-ին նրբ., թիվ 2 հեռ.՝ (0 322) 2-29-67 հեռապատեմ (0 322) 4-47-81 էլ. փոստ՝ acrcp@acrcp.am կայքէջ՝ www.acrcp.am

«Բյուրակն» կրթահամալիրի Սևանի ուսումնական խումբ կարող են ընդունվել տարրական դպրոցի 6-9 տարեկան երեխաները: Հասցե՝ ք. Սևան, Աբովյան 140 հեռ.՝ (0 261) 6-02-05, (0 93) 33-41-12

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԿԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴԻՄՆԱԴՐԱՍԻ ՈՒՅՉԱՆ-ՖԱՍԵԼԻ ԱՆՎԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՑՅՆ ԾՐԱԳԻՐ 2009-2010

Ժողովրդավարության աջակցման ազգային հիմնադրամը (Վաշինգտոն) Ռեյզան-Ֆասելի անվան կրթաթոշակային ծրագիրն մասնակցության մրցույթ է հայտարարում: Այն տարբեր երկրներում համուն ժողովրդավարության պայքարողներին, գիտնականներին և լրագրողներին հնարավորություն է տալիս խորացնելու ժողովրդավարության մասին գիտելիքները: Հիմնադրամի առաքելությունն է՝ նպաստել ժողովրդավարական հասարակության զարգացմանը և զարգացմանն ուղղված գործունեությանը:
Ֆորումն առաջարկում է գործնական ծրագիր՝ 5 ամիս տևողությամբ, որը մասնակիցներին օգնում է կատարելագործել ժողովրդավարական հասարակություն կառուցելու միջոցներն ու ռազմավարությունը, և տեսական ծրագիր՝ 5-10 ամիս տևողությամբ՝ աշխատանքների հրապարակման նպատակով հետազոտություններ կատարող գիտնականների համար:
Ծրագրին կարող են մասնակցել՝ առաջին հերթին զարգացող ժողովրդավարություն ունեցող երկրների ակտիվիստներն ու գիտնական-տեսաբանները: Նրանք պետք է ունենան ժողովրդավարության զարգացման ոլորտում գործնական աշխատանքի մեծ փորձ: Գիտնականները պետք է ունենան գիտությունների

թեկնածուի կամ դոկտորի կոչում: Կարևոր նախապայման է անգլերենի իմացությունը:
Ծրագրի տևողությունն է՝ հոկտեմբերի 1-ից հուլիսի 30-ը: Մասնակիցները ապահովվում են ամենամսյա կրթաթոշակով, բժշկական ապահովագրությամբ և ավիատոմսերի ձեռք բերման աջակցությամբ:
Տեղեկությունների համար կարող եք այցելել www.ned.org/forum/R-FApplication.doc կայքէջը: Դիմումի ձևը՝ համացանցից: Բոլոր փաստաթղթերն ու դիմումները պետք է լինեն անգլերեն:
Դիմումների երկրայացման վերջնաժամկետն է 2008 թ. նոյեմբերի 10-ը: Ծրագրին մասնակցության հաստատումներն ուղարկվում են 2009 թ. ապրիլին:
Հարցերով կարելի է դիմել՝ Program Assistant, Fellowship Programs Tel: (202) 378-9700 International Forum for Democratic Studies Fax: (202) 378-9407 National Endowment for Democracy E-mail: fellowships@ned.org 1025 F Street, N.W., Suite 800 Internet: www.ned.org Washington, D.C. 20004

ՄՈՒԱԶՎԱԾ ԾԱԿԱՏԱԳՐԵՐ. ՈՏՆԱՀԱՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Նա դեռևս հույս է հայտնում, փորձում հավատալ, որ իր շահերն իրավացիորեն, Աստուծո մարդկային օրենքներով կպաշտպանվեն, կվերականգնվեն, այլապես ամեն ինչ իմաստագրվում է, դառնում անկարևոր, չնչին...
Գ. Ա. Թեթի խմբագրության աշխատակիցները հեռախոսազ-

րույց ունեցան Վանաձորի քաղաքապետարանի անչափահասների խնամակալության և հոգաբարձության համեմատողի քարտուղար Լեռնուհի Գևորգյանի հետ: Զրույցի ընթացքում նա սասց, որ «Սոսի» մանկատան ստեղծումը դրական քայլ էր, բանի որ դրանով Սարիբեկյաններին հաջողվեց մուրացկանությամբ զբաղվող

երեխաներին հավաքել և փրկել փողոցից, չնայած մեծ մասամբ այդ երեխաներն այդպես էլ չինտեղվեցին հասարակության մեջ, չկայացան որպես հասարակության լիարժեք անդամներ: Սարիբեկյան ընտանիքի կատարած բարեգործություններն, անշուշտ, դրվատանքի, գնահատանքի արժանի են...

Թերթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Table with 4 columns: Contact info for the center, info for the 'Legal Culture' project, contact info for the 'Law and Justice' center, and contact info for the 'Human Rights and Rule of Law' center.